

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՒԻ ՄԱՐԶ

ԳՈՂԹԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Հաստատվել է համայնքի ավագանու



Հ. ՍԱՆՎԵԼՅԱՆ

Ինքնիշխանության պաշտոնատեղի 41-Ն որոշմամբ

2016թ., • գ. Գողթանիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	5
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	6
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	7
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	8
3.1. Համայնքի զարգացման տեսիլական.....	8
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	8
4. ՀԶՄ ֆինանսավորում.....	11
5. ՀԶՄ մոնիթորինգ.....	12

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գողթանիկ համայնքը ունի 204 մշտական բնակչություն, որից շուրջ 170-ը՝ 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոց տանող ճանապարհի և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Գետիկ մատուռի վերանորոգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Համայնքի մշակույթի տան հիմնանորոգում

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոց տանող ճանապարհի և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Գետիկ մատուռի վերանորոգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Համայնքի մշակույթի տան հիմնանորոգում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքը ունի երտասարդություն . որոնք կարող են կազմակերպել կրության և դաստիարակության, մշակույթային և շինարարական աշխատանքներ: Համայնքում կառուցվել են 3 միջին հզորության ՓՀԷԿ-եր, իսկ հետագայում նախատեսվում է ևս 2 հատ ՓՀԷԿ-երի կառուցում, որտեղ աշխատում են համայնքի երտասարդները:

Համայնքն ունի արտաավայրեր և վարելահողերը, այդ հողերի շնորհիվ կարելի է համայնքում զբաղվել անասնապահությամբ և պահել 1000-ավոր գլուխ անասուններ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսիլական

Համայնքի տեսիլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, Համայնքատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Համայնքում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Համայնքում նկուղային ապաստարանների և ՀԷԿ-ի կառուցումը: Մշակույթի տունը գտնվում է անբարեկարգ վիճակում, անհրաժեշտ է մեծ ֆինանսական ներդրում, մշակույթի տան վերանորոգման և վերը նշված կառույցների իրականացումը: Նկուղային ապաստարանների և ՀԷԿ-ի կառուցումն համար կստեղծվեն աշխատատեղեր: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել ՀՀ կառավարություն առջև ստանալու անհրաժեշտ ֆինանսական ներդրումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի ընթացքում

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: Փողոցային լույսեր են անցկացվել համայնքի գլխավոր փողոցում, սակայն այն ամբողջությամբ չի ավարտվել: 2017 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի գլխավոր փողոցի մնացած 1.5 կմ ճանապարհի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 5 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ:

ԾՐԱԳԻՐ 3

ԳԵՐԵՉՄԱՆՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:

Գերեզմանոցի ճանապարհի անբարեկարգ վիճակը խնդիր է համայնքի բնակիչների համար: Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է Համայնքացիների Համայնքատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Գերեզմատունը ցանկապատվել է համայնքի միջոցներով:

ԾՐԱԳԻՐ 4

ԳԵՏԻԿ ՄԱՏՈՒՈՒՎ ԿԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ

Գետիկ մատուղը գտնվում է Գողթանիկ համայնքում: Գողթանիկ Գետիկ մատուղը քայքայվել է փլվել:

Ակնկալում ենք համապատասխան մարմինների աջակցությունը, մատուղը հիմովին փլուզումից փրկելու համար: Միաժամանակ Գողթանիկի համայնքապետարանը պատրաստ է հնարավորության սահմաններում 2018-2019թթ. տրամադրել աջակցություն՝ 1 մլն դրամի չափով, մնացած անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ համապատասխան մարմիններից և անհատ ներդրողներից:

- ծրագրի օգուտները և արդյունքները.
- ներգրավված բնակիչների թիվը.

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: